

ՀԱՄԱՍՏԵՂ

ՄՊԻՏԱԿ ԶԻԱՊՐԵ

վեժ

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 821.19-31 Համաստեղ
ԳՄԴ 84 (5Հ)-44
Հ 204

Հրատարակվել է պետական պատվերով

Հրատարակության պատրաստեց՝ Արքմենիկ Նիկողոսյանը
Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Համաստեղ
Հ 204 Սպիտակ ձիավորը: Վեպ / Համաստեղ.- Եր.: Արմավ, 2016. - 788 էջ:

Համաստեղի «Սպիտակ ձիավորը» վեպը հայ գրականության նվաճումներից է: Առաջին անգամ երկու հատորով լույս է տեսել 1952-ին՝ Լոս Անջելեսում: Ներկա հրատարակությունը առաջինն է Հայաստանում: Ուղղվել են նախորդ հրատարակության մեջ սպրդած վրիպակներն ու բացթողումները:

ՀՏԴ 821.19-31 Համաստեղ
ԳՄԴ 84 (5Հ)-44

ISBN 978-9939-863-13-9

© Համաստեղ, 2016
© «Արմավ», 2016

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Համաստեղի «Սպիտակ ձիավորը» վեպը գլուխ առ գլուխ սկսել է հրատարակվել նախ Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Առաջին գլուխը լույս է տեսել 1931 թվականի մայիսին, «Հայրենիքի» այդ տարվա 7-րդ համարում: Այնուհետև, ինչպես Համաստեղն ինքն է նշում վեպի առանձին հրատարակության առաջաբանում՝ «Վեպը ամս է ամիս կը հասցնէի «Հայրենիք Ամսագրին»: Վեպը «Հայրենիքում» լույս տեսավ մինչև 1933 թվականի հոկտեմբերը (թիվ 12), ընդ որում՝ ընթացքում առկա են համարներ, որոնցում «Սպիտակ ձիավորը» լույս չի տեսել: «Հայրենիքում» վեպն ավարտվում է «Կապոյտ յուլունքով գլուխը» հատվածով, որի վերջում առկա է խմբագրության հետևյալ ծանուցումը. «Սպիտակ Ձիավորը» վեպի երրորդ մասը լույս կը տեսնէ «Հայրենիք» ամսագրի առաջիկայ տարուան ընթացքին»: Սակայն վեպն իր լրումին ամսագրում այդպես էլ չհասավ, ինչպես Համաստեղն է նշում՝ «ինձմէ անկախ պատճառներով»: Տարիներ անց Համաստեղը շարունակում և ավարտում է վեպը՝ պատրաստելով առանձին հրատարակության, որը լույս տեսավ Լոս Անջելեսում, 1952 թվականին, երկու հատորով:

Հարկ է նշել, որ «Հայրենիքում» Համաստեղը հրատարակել է վեպի 25 գլուխ, իսկ հետագայում դրանց ավելացել է ևս 8-ը: Ընդ որում՝ առանձին հրատարակության ժամանակ նաև կառուցվածքային փոփոխություններ են կատարվել, առաջին հերթին՝ Համաստեղը վեպի հատվածներից հանել է դրանց թվագրումները՝ *Առաջին գլուխ, Երկրորդ գլուխ* և այլն՝ թողնելով միայն վերնագրերը, ինչպես նաև որոշ վերնագրերի աննշան փոփոխություն է կատարել: Մասնավորապես՝ «Հայրենիքում» «Մարտիկ ֆիրար» (1931, թիվ 12) վերնագիրը առանձին հրատարակության մեջ դարձել է «Մարտիկ փախստական», և այլն:

Վեպի առաջաբանում Համաստեղը նշում է, որ ամսագրի յուրաքանչյուր համարին հասցնելու պարագան է հանգեցրել նրան, որ վեպը «տեղ տեղ լայն փակագիծ բացուած եւ թէքնիք պահանջներուն հպատակած չէ»: Առանձին հրատարակության մեջ նա փորձել է ինչ-որ չափով շտկել այդ թերությունները, ինչ-ինչ փոքրիկ հատվածներ է կրճատել, փոքրիկ պարբերություններ հավելել...

«Սպիտակ ձիավորը» վեպի ներկա հրատարակությունը պատրաստելիս, բնականաբար, նախևառաջ հենվել ենք առանձին հրատարակության տեքստի վրա: Սակայն, ցավոք սրտի, այդ հրատարակությունը լեցուն է տարաբնույթ սխալներով, վրիպակներով, զուգաձև գրություններով (ընդ որում՝ այդ զուգաձևությունները վերաբերում են թե՛ առանձին բառերի, թե՛ անձնանունների և տեղանունների գրությանը), հերոսների անունների շփոթագրությամբ (ասենք՝ Օհանը մեկ այլ տեղ հանդիպում է որպես Օվան, մեկ այլ տեղ՝ ֆիդայի Մարգարը ներկայացվում է մեկ այլ ֆիդայու՝ Մակարի անունով և այլն), ավելին՝ տեխնիկական պատճառներով որոշ տողեր կրկնվել են և որոշ տողեր

դուրս սպրդել: Ուստի, անխուսափելիորեն դիմել ենք նաև «Հայրենիքում» տպագրված տեքստին՝ անհրաժեշտ շտկումները կատարելու համար:

Ընդհանուր առմամբ՝ վեպը հրատարակության պատրաստելիս

ա) հնարավորինս շտկել ենք վրիպակները,

բ) միակերպության ենք բերել զուգաձևությունները, ընդ որում՝ նախապատվությամբ տալով արևմտահայերենին բնորոշ ձևերին, մանավանդ որ՝ վեպում շատ-շատ են արևելահայերենին բնորոշ բառաձևեր ու կառույցներ,

գ) հնարավորինս միակերպ ենք դարձրել հատուկ անունների գրությունը, ընդ որում՝ այս պարագայում հարկ ենք համարում նշել, որ որոշ հատուկ անուններ, ինչպես Չէրչի Կիրոս, Սպիտակ ձիաոր, Նաճար Արթին, Տէմիրձի Խաչեր և այլն, վեպում ունեն որոշակի այսպես ասած՝ զարգացում, և ըստ այդմ՝ տարբեր կերպ են գրվել: Օրինակ՝ սկզբում *տէմիրձի*-ն Խաչերի պարագայում սոսկ արհեստի նշագրում է և կիրառել ենք փոքրատառով, հետագայում, երբ արհեստի նշագրումը վերաձել է հատուկ անվան՝ կիրառել ենք մեծատառով: Նույն սկզբունքն է նաև մյուս անունների պարագային,

դ) պակասող տողերը, բառերը վերականգնել ենք ըստ «Հայրենիքում» տպագրված տեքստի: Հետագայում գրված հատվածներում նման դեպքերի հանդիպելիս փորձել ենք վերականգնումները կատարել՝ ելնելով համատեքստից,

ե) հնարավորինս շտկել ենք հատուկ անունների շփոթագրությունը,

զ) պահպանել ենք հեղինակի կիրառած ուղղագրությունը:

Բնականաբար, այս աշխատատար գործը նույնպես զերծ չի կարող լինել վրիպակներից: Բայց հուսով ենք, որ ավելի քան 60 տարի անց վերջապես Հայաստանում, ընդ որում՝ մեկ հատորով իրականացվող «Սպիտակ ձիավորը» վեպի հրատարակությունը չի լինի վերջինը և այդ վրիպակներն էլ հետագայում կուղղվեն: Ամենակարևորն այն է, որ Համաստեղի փառահեղ այս ստեղծագործությունը վերջապես կունենա մի փոքր ավելի լայն շրջանառություն, առիթ կտա նորանոր և առավել խորունկ գրականագիտական ընթերցումների և իր արժանի տեղը կգտնի հայ գրականության լավագույն գործերի շարքում:

Արթմենիկ Նիկողոսյան

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԹ

Հայ գրողի մը համար դժուար աշխատանք է մօտենալ հայ ժողովուրդին, չափել անոր տառապանքն ու երազներու վսեմութիւնը: Տառապանքը հայուն մէջ դրած է մարդկայինն ու գաղափարականը: Անոր վերելքը եղած է ազգային նպատակի մը նուազումը: Ան ցամաք ելաւ, անապատի տանջանքներէն կորսնցուցած ամէն բան՝ բայց ո՛չ նպատակը: Այդ ազնուական նպատակը կար հայ կռուողին, մտաւորականին, եկեղեցականին եւ մանաւանդ արի հայ մամիկին մէջ երբ այն օրերուն Մարսէյի փողոցներէն կ'անցնէր իր թշուառ արտաքինով: Այդ հայ մամիկը պատրաստ էր նորէն անցնիլ անապատի տանջանքներէն ու ձգել իր կմախքը աւազներուն մէջ, պահելու համար ցեղային նկարագիրն ու նպատակը:

Այդ ազնուական նպատակը կար այն օրերու Պէյրութի, Հալէպի ու Յունաստանի վրանաքաղաքներուն մէջ, ուր չքաւոր հայ ժողովուրդը է՛ն առաջ, դեռ չշինած հին տախտակներով ու ժանգոտ թիթեղներով իր բըշակը, շինած էր բարձր ձեղունով փայտաշէն եկեղեցին ու ծունկի կուգար նոյնպէս փայտէ շինուած նիհար ու հսկայ խաչելութեան մը առջեւ աղօթելու ԻՐ Աստծուն: Անոր ցամաքած մարմնին մէջ այդ ուժի յաւիտենականութիւնը կար:

Դժուար չէ ըմբռնել հայ ժողովուրդը, երբ ան կանանչ-արեւ դաշտին մէջ «Հորովկ» կ'երգէ, երբ ծիսական հանդիսաւորութեամբ անդաստան կը կատարէ աշխարհի չորս կողմերուն, կ'աղօթէ բոլորին համար ու առած է Բարեկենդանի ժպիտն ու առատութիւնը:

Հայ ժողովուրդը բարդ է իր տառապանքներուն, իր հերոսութիւններուն մէջ ու հայ գրողը ճիգ ըրած է մօտենալ իսկապէս բօնանթիք ժողովուրդի մը ապրումներուն:

«ՍՊԻՏԱԿ ՁԻԱԴՈՐ»-ը այդ ճիգերէն մէկն է, նոյնպէս բօնանթիք ժողովուրդով ու հերոսներով: Մարտիկ որպէս խորհրդանիշ կ'անցնի վէպին մէջէն: Հայ ժողովուրդը բօնանթիք է իր ապրումներով, իր հաւատքով ու հերոսներով: Առաւելապէս այդ շաղախին կը պարտի իր գոյութիւնը, այլապէս՝ եթէ յանկարծ գիտակցէր տառապանքի իրականութեան, ան վաղուց կը չքանար որպէս ազգ:

«Սպիտակ ձիաւորը» սկսայ գրել 1931-ին, երբ երկար ճամբորդութենէ մը նոր էի վերադարձեր Ամերիկա:

Ծանր էր տեսնել անապատէն դուրս եկած, շուար ժողովուրդ մը, ցամաքած մարմնով ու խոհուն աչքերով: Աւելի ծանր էր տեսնել, Տէրգօրի մօտ, Ճիգիրէի անապատին այն վայրը, ուր 40,000 հայեր ինքնիրենց վրայ քայքայուած՝ աւազներուն վրայ ձգած են կմախքներ միայն: Ծանր էր մանաւանդ այդ աւազներէն վերցնել գանկ մը ու ճամբորդել անոր հետ:

Վէպը փնտռուք մըն է մեր հոգեկան աշխարհին ու աշխարհագրական ցամաքին: Փորձած եմ տալ ժողովուրդի մը հերոսական մարտնչումները:

Վէպը ամսէ ամիս կը հասցնէի «Հայրենիք Ամսագրին»: Այդ է պատճառը, որ տեղ տեղ

լայն փակագիծ բացուած եւ թէքնիք պահանջներուն հպատակած չէ: «Ամսագրին» մէջ շարունակուեցաւ երեք տարի, առանց իր լրումին հասնելու, ինձմէ անկախ պատճառներով: Տարիներ յետոյ միայն լրացուցի վէպը, առանձին հատորով հրատարակելու նպատակով: Առանձին շնորհակալութեամբ կ'ուզեմ յիշել, որ «Սպիտակ ձիւոր»ի հրատարակութիւնը իրականութիւն դարձուցին իմ բարեկամներէն՝ Յ. Քարեան եւ Ալէք Փիլիպոս, որոնք հայ գրականութեան օգտակար ըլլալու գեղեցիկ մտահոգութեամբ կազմեցին «ՀՈՐԻ-ԶՈՆ» տպարանը Լոս Անճէլըսի մէջ: «Սպիտակ ձիւոր»ի հրատարակութեան համար իր սիրայօժար մասնակցութիւնը բերած է նաեւ Տիթրոյիթէն, Տօքթ. Ս. Քէչիչեան:

Հայաստանը աշխարհագրական սահման ըլլալէ աւելի հոգեկան քարտէս եղած է, ըսել կ'ուզեմ, քարտէսի գիծերու հետ գործ ունեցած չեմ: Գործածած եմ գիւղի, քաղաքի, ճամբաներու, լեռներու եւ քրտական ցեղերու անուններ միայն, ինչպէս անուններ են Կիրոս, Ուլֆա, Վարդան, Մակար եւ շատ շատեր, որոնց ներքեւ կան իրական նկարագիրներն ու անձնաւորութիւնները:

Վէպին չըջանն է - վաթսունամեակ մը մեզմէ առաջ:

ՀԱՄԱՍՏԵՂ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐՏԻԿՆ ՈՒ ԶԷՅՆԱՊԸ

Բերդակը եկեղեցիով ու ջրաղացներով գիւղ մըն էր, որ նշանաւոր էր իր հայկական հին բերդով ու ծիրանի ծառերով: Բերդը դրուած էր լեռան վրայ, գոհարները գողցուած թափ մը պէս:

Մարտիկ, երբ եօթը տարեկան եղաւ, ինքզինք այդ աւերակ բերդի շուքին տակ գտաւ հօրաքրոջ այծին հետ միասին: Ոտքերը բոպիկ էին, կը հագնէր պատռած կարմիր վարտիկ:

Մարտիկ յաճախ կը սիրէր բերդի ծաղկած ծիրանի ծառերուն տակ, կոնակի վրայ պառկել ու մտածել պարսատիկի ու սրինգի մասին: Եթէ նախշուն թեւերով պարսատիկ մը ունենար, կրնար իր քարը բերդին քովէն մինչեւ ջրաղացքին մօտ փշատի մը ձեր կատարին շինուած արագիլի բոյնին հասցնել: Մարտիկ գոյնի երեւակայութիւնը ջուլհակ Պետոյի առէջներէն ու թռչուններէն առեր էր: Ան յաճախ կեցած էր ջուլհակի մօտ, այծին հետ միասին, նոյնիսկ օգնած էր անոր գունաւոր կծիկները մօտեցնելով, երբ ջուլհակ Պետօ բերդի ճամբուն վրայ գունաւոր առէջ կը թափէր, կարմիր, կապոյտ ու ձերմակ: Մարտիկ այդ օրերուն եօթը տարեկան էր, կապոյտ յուլունքէ օղ մը իր ձախ ականջին:

Մարտիկ որբ էր: Մօրաքոյրը կը պատմէր, որ եկեղեցիին պատկից տունը իր հօրն էր: Տունը վաղուց փլած՝ կը մնային կիսաքանդ պատերը պատուհաններով, նաեւ կրակտան սեւ սինը կիսով հողերուն մէջ թաղուած:

- Տղաս,- կը խօսէր հօրաքոյրը,- եկեղեցին շինուեցաւ, սակայն ձեր տունը հող ու մրեղ դարձաւ:

Մարտիկ շատ բան չէր հասկնար հօրաքրոջ խօսածներէն: Եւ սակայն գիւղին համար գաղտնիք մը չէր, որ Մարտիկնց տունը քանդողը եկեղեցին շինող ուստան էր, բնութեամբ վայրագ, կենդանական, լուռ ու յաճախ գինով ուստա Սարգիսը: Խալֆաները ուստա Սարգիսի ներկայութեան մուրճը քարին համարձակ չէին կրնար զարնել: Ան մուրճի ձայնէն կը հասկնար, որ տաշողը վարպետ մարդ չէ. հեռուէն նայելով միայն գիտէր որ չափը կարճ կամ երկար բռնուած է: Կ'ըսէին, որ ուստա Սարգիս երբ գինով կ'ըլլար, իր գործին մէջ երեւակայութիւնը աւելի ուժեղ բոցեր կ'առնէր: Ան բնութեան հետաքրքիր մէկ կատակը, հանճարեղ ուժ մըն էր:

Գիւղացիները կը պատմէին, թէ ինչպէս շարուած պատը քակել տուած է. որովհետեւ պատին մէջ տեղաւորած էին սխալ տաշուած քար մը: Քառասուն տարուան խալֆաները մինչեւ վերջն ալ չհասկցան, թէ ո՞ւր էր սխալը:

- Դուք խալֆա չէք. եթէ Իստամպոլ երթաք, բաղնիքի տալլաք իսկ չէք կրնար ըլլալ,- յաճախ կը պոռար իր ձեռքին տակ աշխատող խալֆաներուն վրայ:

Ուստա Սարգիս եթէ հայ չըլլար, անտարակոյս մեծ գինուորական մը կ'ըլլար: Կը հագնէր ծանր վերարկու մը, որ իբրեւ անկողին կը պատսպարէր գինքը, երբ շատ գինով՝ պատի մը տակ կ'իյնար ու հոն ալ կը քնանար:

Այն օրերուն Մարտիկի մայրը նոր հարս էր, տակաւին քառասունքին մէջ՝ սաւանը գլխին:

Ուստա Սարգիս եկեղեցիին պատը շարած ատեն քանի մը անգամ տեսած էր նոր Հարս մը՝ ձեռքերը հինայոտ, թուխ չալվարով՝ կոկոնի պէս սգուած:

Հարսը տանիքէն յաճախ կը տեսնէր եկեղեցիի պատերուն բարձրանալը, ու ուստան պատին վրայ ահեղ սուրբի մը պէս կ'երեւէր: Ուստան ահեղ սուրբ մըն էր գիւղի կիներուն համար, որ քանի մը մուրճի հարուածներով կրնար եկեղեցի մը կանգնեցնել:

Օր մըն ալ ուստան կը տեսնէ որ նոր Հարսը իր երեսը բացած, տանիքին վրայ լաթեր կը փոէ: Այդ տեսներ կ'ըլլայ:

Նոյն օրը ուստան Մարութենց դռնէն ներս կը մտնէ ու բարեւ կուտայ: Այն օրերուն գիւղն ամբողջ իրենց եկեղեցին շինող ուստա Սարգիսի արեւով կ'երթային: Անոր առջև մարգարիտներու պէս կը թափէին իրենց լաւագոյն յարգանքը, գինին ու շարպաթը:

Նոր Հարսի երիտասարդ ամուսինը, Ստեփան, տան ընդարձակ բակին մեջ դաշտէն բերուած թթենու տերեւներ կը ջարդէր շերամի համար: Հարս Մարիամ իր հինայոտ ձեռքերով թթենու տերեւներ կը հաւաքէր՝ սաւանի ծայրերը վերցնելով:

- Բարի եկար, ուստա,- խօսեցաւ երիտասարդ ամուսինը:

Հարս Մարիամ աթոռակ մը հրամցուց ջրհորին մօտ: Ուստան հարցուց շերամներուն մասին, խօսեցաւ Տիգրանակերտի մէջ պատրաստուած նոր տեսակի մանր ու ազնիւ խոզակներու մասին, մինչ Հարսը գիւղի եկեղեցին շինող ահեղ սուրբը յարգելու ուրախ ու շնորհալի աշխատանքին մէջ էր: Ներսէն բերաւ կարագ, չորցած թուզ, կաղամբի թթու, կտորած ընկոյզ ու գինի:

Երիտասարդ ամուսինը ուրախ էր, որ ուստա Սարգիս չտկեր՝ իր տունն էր եկեր: Այն-քան ուրախ էր նաեւ Հարս Մարիամը, մինչեւ զգացեր էր իր մարմինը առողատող, եկեղեցիի շուքի մը պէս իր էութիւնը ծածկող նայուածքը ուստային:

Հարս Մարիամ կրակտունէն այլեւ դուրս չեկաւ: Եկեղեցիի նման գեղեցիկ, եկեղեցիի նման ծանր ու ձնշող կաղապար մը նստաւ իր հոգիին վրայ: Ուստայի խոշոր եզան աչքերը գոհեր պահանջող ահեղ ու զօրաւոր սուրբի աստուծոյ մը տպաւորութիւնն ըրած էին: Մարդակերի դիմագծով կուռք մը, որուն մարմինը ոսկի է, աչքերն ադամանդի կտորներ, ու գլուխը թանկագին քարերով պատուած: Հարս Մարիամ իր կեանքին մէջ առաջին անգամ զգացեր էր ցանկութիւնով լեցուն վտանգաւոր ու քաշող նայուածքի մը վախը: Ամուսինը ձայն տուաւ իր կնոջ: Գինին հատած էր: Ուստան ալ աչքը կրակտան դրան՝ կ'ուզէր որ գինիին հետ դուրս գար նաեւ Հարսը:

Յաջորդ օր, ամուսինը դաշտը թթենու տերեւներ կտրելու գացած էր: Հարս Մարիամ հաւերուն կուտ տուաւ, բակին դուռը գոցեց, քօղքը վար առաւ եւ սկսաւ երկար վարսերը սանտրել, երբ միտքը ինկաւ այցելութիւնը ուստային եւ անոր դէմքի արտայայտութիւնը, երբ գինու գաւաթը կը պարպէր: Այդ պահուն էր, որ յանկարծ տանիքի սանդուխներէն անծանօթի մը իջնելը իմացաւ: Քօղքն հագիւ իր գլխին ձգած էր: Բակին մէջ տեսաւ ուստան, անգղի ձեւ առած շուքով:

Հարս Մարիամ, բոլորովին անօգնական, ուզեց պոռալ: Կարծես բան մը կար, որ բռնած էր իր ձայնը ու դուրս չէր գար: Միեւնոյն ատեն այնպէս կարծեց, որ իրեն օգնութեան հասնողը ինքը ուստան էր:

- Մի վախնար, աղջիկս,- ըսաւ ուստան,- ձեր գինին շատ լաւ էր: Որ մի քանի գաւաթ գինի տաս:

Հարս Մարիամ անծանօթ վախի ու շփոթութեան մէջ ուզեց հաւատալ, որ ուստան գինիի համար եկած էր:

- Հա, ես գիտեմ՝ ո՞ր տեղն են ձեր գինու կարասները, ըսաւ ուստան՝ դէմքին տալով ձիու մը հաճելի արտայայտութիւն: Կ'ըսես կճղաւոր ոտքերով, ձիու դէմքով, լեռներու ու-
ժեղ ոգին ըլլար:

- Եկուր, մի՛ վախնար, աղջիկս: Կը սիրեմ գինին կարասէն խմել, միայն մի քանի գաւ-
աթ: Էնպէս լաւն էր ձեր գինին:

Ուստան հարսին ձեռքէն բռնած ներս կ'ուզէր տանիլ: Եթէ պոռար, եթէ յանկարծ
իմանային դրացիները... Ուստան բռնած էր իր ձեռքը կաշիի հոտ ունեցող կենդանիի մը
պէս ուժեղ: Կաքաւը բռնուած էր ուրուրէն, ու կը դողար անոր ճանկերուն մէջ, երկաթէ
կտուցի մը սարսափը իր գլխին: Ուստայի թեւերուն մէջ, հարս Մարիամ լոյսին վրայ այրող
փարուանայի մը հաճելի ողբերգութիւնը կ'ապրէր: Սակայն, գիւղը, դրացիները, ամուսինը՝
այդ երկաթէ կտուցին սարսափն էին: Եթէ ձայն ձգէր, դրացիները վար պիտի գային: Ին-
քը՝ նոր հարս, սաւանը գլխին: Գիւղը. գիւղը անգղի մը կտուցը պիտի ըլլար իր գլխին:

Գարան խաթուն տանիքը լողած պահուն տեսած էր ուստայի սանդուխներէն վեր ել-
լելը: Ուստան տանիքէն անցած՝ ելած էր եկեղեցիի պատին վրայ, իր կտուցով կուրծքին
փետուրները մաքրող անգղի մը պէս շտկած էր թափուած հաստ պելսերը ու սկսած էր
պատին վրայ՝ տաշուած քարերը շարել:

Գարան խաթուն Մարութեանց դուռը կը թակէր, մաղն ուզելու պատրուակով: Գարա-
նին այնպէս թուեցաւ, որ հարս Մարիամ դուռը ուշ բացաւ: Գլխին քօղք չունէր: Գէմքը
տոճոյն՝ այծի մը ակոսներէն վերաւորուած ծաղիկի մը երեւոյթն ունէր:

- Աղջի, քօղքդ ո՞ւր է,- հարցուց Գարան:

Հարս Մարիամ այդ պահուն միայն անդրադարձաւ որ քօղը չկար գլխին:

- Ի՞նչ կայ, աղջիկ, հիւա՞նդ ես: Ստեփա՞նն ուր է,- հարցուց Գարան, երբ նկատեց որ
հարս Մարիամ ցրուած երեւոյթ մը ունէր:

Ինչպէս բոլոր կիներուն, նոյնպէս ալ Գարան խաթունին համար անծանօթ գաղտնիք
չկար: Դուռը գոց, Ստեփանն այնտեղ չէր, ուստային սանդուխներէն վեր ելլելը իր աչքերով
տեսած էր: Մարիամը առանց քօղքի, տոճոյն, կ'ըսես տղացկանի անկողնէն նոր ելած էր:

Քանի մը օր յետոյ արդէն գիւղի կիներուն բերանն էր ոչ միայն քօղքը գլխին հարս
Մարիամը, այլ նաեւ փտած ու դեղին ոսկորներով մեռելները՝ անոր մայրը, նոյնիսկ մեծ
մայրը: Որպէս թէ ատենօք անոր մեծ մայրը *եէնիչէրի* զինուորականի մը վրանին տակ
տեսնողներ եղած են:

Գէմքը նուրի պէս ճաթոտան, գեղեցիկ հարս Մարիամը սկսաւ օրէ օր մաշիլ:

Օրէ օր կը բարձրանային եկեղեցիին պատերը... Ուստա Սարգիս եկեղեցին լրացու-
ցած՝ խաչը գմբէթին վրայ տնկած ու անցած էր:

Ստեփանն օրէ օր կը զգար իր կնոջ միսերուն հալիլը: Կ'ենթադրէր, որ կիները կը մաշ-
ին, կը տոճունին, երբ պզտիկով կը մնան:

Մարիամի գոգնոցը հետզհետէ կը բարձրանար, մինչեւ որ օր մըն ալ դուրսի խօսքե-
րը Ստեփանին ականջը հասան:

Ստեփան այլեւս գործի չէր. երկինքը կ'ըսես իր գերաններով գլխին փլած էր: Օր մը
խիստ, օր մը անուշ բառերով կ'ուզէր խօսեցնել Մարիամը, որ լուռ էր միշտ:

Այն գիշեր Ստեփան սիրալիբ էր: Երկու ամուսինները իրենց գալիք գաւկին մասին խօ-
սեցան: Վաղը հօրաքոյրը պիտի կանչեն, որ տանը լուացքն ընէ:

Հօրաքոյրը խոշոր թիկնեղ կին էր: Մարիամը պզտիկով մնալէն ի վեր յաճախ կ'երթար

անոնց տան գործերը կը տեսնէր, կը զգուշացնէր ծանր աշխատանք ընելէ: Կ'ըսէր, կը սորվեցնէր բաներ, որ առջինեկ ունեցող հարսները չէին գիտեր: Մանաւանդ կը զգուշացնէր, որ յղութեան ծանր շրջանին զգուշանար ձուկ ուտելէ, որպէսզի երեխան ձուկի բերան չունենար:

- Ստեփան, խելքդ գլուխդ թոփէ, էս բոլոր խօսածները *տուշմանի* խօսքեր են: Հօրդ երդիքէն ծուխը որ կը տեսնան, աչքերնին չի վերցնեն,- հորաքոյրը կը խօսեր յաճախ ու կ'աշխատէր տունը շէն պահել:

Այն գիշեր Ստեփան շատ սիրալիւր էր: Գուրսի խօսքերը լսելէն ի վեր երբեք այնքան ջերմ սիրած չէր իր կինը: Անոր լայնցած կողերուն, խոշորցած կուրծքին, գոհարագարդ թագի մը պէս ծանր մարմնին մէջ, կը զգար իր գոյութիւնը, փառքը այնպէս, ինչպէս բարգաւաճ երկիրներ գրաւող զինուորական մը:

Հարս Մարիամ այն գիշեր այնքան ուրախ զգաց, որ ամուսինը հետզհետէ կը մոռնար դուրսի խօսքերը, կը փոխուէր:

- Թող ըսեն, Մարիամ, այլեւս հոգ չպիտի ընեմ, միայն թէ կ'ուզեմ ճշմարտութիւնը իմանալ, միայն կ'ուզեմ գիտնալ որ քու կամքովդ եղած չէ: Պատմէ՛, պատմէ, ինչպէ՞ս եղաւ:

Ձէ, չէ, իր կամքովը եղած չէր: Հարս Մարիամ ուզեց վերցնել մղձաւանջը, որուն մէջ ամուսինը կ'իյնար յաճախ: Երբ ճշմարտութիւնն ըսէր, ամուսինը պիտի տեսնէր իր անմեղութիւնը ու պիտի մոռնար, պիտի ներէր իրեն: Ու պատմեց.

- Այդ օր դուն դաշտ գնացեր էիր, ես ալ դուրը գոցած տան-գործ կ'ընէի... Երկու օր յետոյ Ստեփանը հեռացած էր գիւղէն: Այլեւս այն հեռանալն էր:

Տղաբերքէն քանի մը ամիս յետոյ Հարս Մարիամին ոսկորները քանդուեցան, մանաւանդ որ գաւազը մեծ ցաւերով ունեցաւ: Գիւղացիները իրենց լեզուով անոր գերեզմանը փորեցին ու պատանքով իջեցուցին հող:

Այն օրերուն երեխան քանի մը ամսու էր: Հօրաքոյրն իր մօտ տարաւ ու մեծցուց գիւղի մայրերու եւ այծի կաթով: Քանդուած տան մը միակ ճրագը, Մարտիկը՝ մնացական ըլլալու համար, տակաւին երեխայ, հօրաքոյրը ծակեց անոր ձախ ականջը ու անցուց կապոյտ յուլունք մը:

Ուրիշներ ամսով կը մեծնային, Մարտիկը օրով կը մեծնար: Եօթը տարեկան էր, երբ ինքզինքը բերդի շուքին տակ գտաւ հօրաքոյրի այծին հետ եւ մտածեց պարսատիկի մասին:

Մարտիկ հօրաքոյրին հէքեաթներով մեծցաւ,- *Հազարան պլպուլ, Իմաստուն ջուլհակ, Մհեր*: Անոր հէքեաթներու մէջ կար ապրչում, խումաչ, ձի, թանկագին քարեր, իշխան, արաբ ծառաներ, թագ ու ծիրանի:

Բերդակը ուրիշ հայ գիւղերու շատ չէր նմաներ: Բնակիչները կ'ապրէին առեւտուրով ու արհեստով: Ծատեր շերամաբոյծ էին: Վայրը լեռնոտ էր, կը պահէին այծեր: Գորգագործութիւնով զբաղողներ ալ կային: Գիւղն ունէր իր պագարը, ուր երբեմն հեռու տեղերէ աղ ու օճառ բերող ուղտեր կը չոքեին: Երջակայ գիւղերէն քիւրտ կիներ իրենց գլուխներուն վրայ դրած կը բերէին սեր, մածուն, կարագ, ոչխարի բուրդ:

Բերդակի մէջ կարելի էր գտնել հին արաբական տիրապետութենէն մնացած հէքեաթներ «Հազար ու մէկ գիշերներ»էն, արաբական բառեր ու գործիքներ: Անոնց ժողովրդական երգերը հին ոսկիի պէս ծանր էին ու գեղեցիկ գորգի մը պէս նախշուն:—

Աթլլաս, սոմա թել, մաշալլա, լահոս շալ, մարգրտե եորղան, ոսկունքէն սեղան: Անոնց մէջ ազնուականութիւն մը կար:

Կը պատմէին, որ Անիէն գաղթած բնակիչներէն մէկ փոքր մաս մը իրենց վրանը այդ բերդին տակ զարկած են: Հակառակ որ Բերդակ քանի մը անգամ թալլուած էր քիւրդերէն, գիւղացիները իրենք զիրենք շտկած էին նորեն, շնորհիւ իրենց հալալ աշխատանքին: Անոնք որքան ալ զրկուած ըլլային, մետաքսէ հիւսուած հին շուրջափ մը նման կը պահեին իրենց վրայ հին ազնուական գոյն մը:

Մարտիկի հորաքոյրը մինուճար կին մըն էր: Ուներ այծ մը ու երկու ծիրանի ծառ: Գիւղացիներու հացին ու լուացքին օգնելով կ'ապրէր եւ սակայն ուներ հին արծաթէ քթախոտի տուփ մը նուրբ բանուածքներով: Կափարիչին վրայ փորագրուած էր Սաթենիկի ու Արտաշէս Բ.ի նկարը գետի երկու ափերուն վրայ: Տօնական օրերուն, հորաքոյրը արծաթէ երկար շղթայով մը կ'անցնէր իր վզէն, տուփը կը տեղաւորէր շալի ծալքին մէջ ու Մարտիկի թեւէն բռնած եկեղեցի կ'երթար:

Մարտիկ եկեղեցիին մէջ կը սիրէր պատարագաւոր քահանայի շարժումները, անոր ծիրանեգոյն շուրջափը, արծաթէ սաղաւարտը տասներկու առաքեալներու պատկերներով նկարազարդուած: Քահանան իր այդ տարագով Մարտիկի լսած հէքեաթի հերոսներուն բոցէ երեսները կը յիշեցներ: Մարտիկ կը զարմանար որ քահանան ձի չունէր:

Մարտիկ, թեւերուն երկնալուն սպասող արծուիկի մը պէս բերդին տակ թառած, կը դիտէր գիւղին ճամբան, ուրկէ կ'անցնէին այծերու տողանցքը, երբեմն ալ ուղտերու ծանր անցքը ամպերու պէս դանդաղ: Կը գիտէր եկեղեցիի հոյակապ զմբէթը արեւին տակ փայլիլան խաչով: Տանիքներու վրայ փռուած լաթեր, ու օճառ գողնող անձեղներու սեւ ու սպիտակ թեւեր: Կը տեսնէր արագիլին բոյնը, կը լսէր երկաթագործ Սաչերի մուրճին ձայնը, նաեւ ջուլհակ Պետօն, որ ճամբուն երկայնքին առէջ կը թափէր, կարմիր, կապոյտ ու ճերմակ:

Այդ բոլորին մէջ միակ իրականն ու հեռաւորը, հորաքոյրին պատմած հէքեաթի հերոսներն էին, որ հզօր երաժշտութեան մը պէս թափ առած էին իր երեւակայութեան մէջ, այնպէս, ինչպէս վանականի մը համար Աստուածամօր ժպիտն էր հեռաւոր ու իրական:

Մարտիկ յաճախ եղէգով սրինգ կը շինէր: Կը բանար ծակեր, մատները ծակերուն վրայ՝ չրթներուն սուլելու ձեւ տուած՝ կը փորձէր եղէգէն ձայն հանել: Եղանակ մը, որ մոռցած էր կարծես, որ նոր պիտի սորվէր: Միայն ձայնը մատներուն հետ ելեւէջ շինէր:

Մարտիկ ուրախ էր նոյնիսկ եղէգին հանած խժուռ ձայնին համար: Ու այծերու, ոչխարներու հօտը իր ետեւ քաշող վարպետ հովիւի մը ձեւերը կ'առնէր: Վարպետ սրնգահար հովիւը, հէքեաթի ուրիշ հերոս մըն էր Մարտիկի համար, որ աղբիւրին վազող ծարաւ ոչխարները իր սրինգի ձայնով կը կեցնէր յանկարծ:

Մարտիկ կը տրտմէր, երբ կը տեսնէր, որ այծը խոտը բերանին, ծիծեռնակէ մը հալածուած միջատի մը ձայնին աւելի ուշադրութիւն կը դարձնէր, քան իր եղէգի խժուռ ձայնին: Մարտիկ յուսահատ իր եղէգի ձայնէն, կը սիրէր ծաղկի վրայ թառող ոսկեջրուած մեղուի մը թեւերէն բռնել կամաց ու դիտել խայթոցը: Մարտիկ յաճախ մեղուններէն խայթուած, ուռեցած չրթներով տուն էր գացեր:

Կէսօրը անց էր: Այծն իր ետեւ ձգած՝ Մարտիկ ջուլհակ Պետոյի առէջին մօտ կեցաւ: – Ըսէ տեսնեմ, Մարտիկ, այծէն ի՞նչ սորվեցար էսօր,– կը հարցնէր ջուլհակ Պետօն, որ կը սիրէր Մարտիկի հետ կատակել:– Այծի էտ մօրուքը որ կայ, Մարտիկ, աշխարհի բա-

ները կատարեալ են: Արեւը բերդին վրայէն կ'անցնի, քէօսէ Աստուրին երեսն ալ մազ չի բուսնիր: Զգիտես, Մարտիկ, քէօսէ Աստուրը իր երեսին վրայ մազ որ ունենար, քար քարի վրայ չէր մնար: Պէլքի Սուլթանի գահը էշին բեռցնէր:

Քէօսէ Աստուր գեղի ամաններն ու պղինձները մաքրող *խալածին* էր, որ ծեծ կուտէր իր կնիկէն:

Զուլհակ Պետօ մէկ կողմէն առէջները ձգելով՝ կը շարունակէր իր կատակները Մարտիկի հետ: Օր մը հաւատացուցած էր Մարտիկին, որ իր հօրաքոյրը գիշերները բուխերիկէն վեր կ'ելլէ ու կարասի մը մէջ մտած՝ լուսնկան կը թոփ:

Մարտիկ չկասկածեցաւ Զուլհակի խօսքերուն, որովհետեւ հօրաքոյրը գիտէր բախտ նայիլ ու հատիկ ձգել: Գիւղացիներ յաճախ հօրաքոյրին մօտ կուգային, հատիկ ձգել կուտային երբ իրենց այծը կորսուէր եւ կամ նամակ չգար դարիպէն:

Զուլհակ Պետօն այն օրէն ի վեր աւելի սիրած էր Մարտիկը, երբ յաջորդ օր հօրաքոյրը բարկացած՝ իր մօտ եկած էր:

- Էտ ո՞վ ըսաւ քեզի, Մաքօ,- հարցուց Պետօն ժպտով:
- Մարտիկը:

Մարտիկը՝ ոտքերը գետին գարկած՝ պահանջած էր որ թոչող կարասին տեղն ըսէ: Կ'ուզէր ինքն ալ լուսնկային թոչիլ: Մարտիկ նոյնիսկ այն գիշեր քնացած չէր տեսնելու համար, թէ հօրաքոյրը ինչպէ՞ս պիտի ելլէ բուխերիկէն, կարասի մէջ ինչպէ՞ս պիտի մտնէ:

Զուլհակ Պետոյի յաջող մէկ կատակներէն մէկն էր: Ինչ հոգ թէ հօրաքոյրը բարկացած էր: Վաղը դռնէն անցած ատեն ներս կը մտնէ, «ողորմի Աստուած» մը կ'ըսէ, գինին ալ կը խմէ ու դուրս կ'ելլէ: Զուլհակ Պետօն այդպէս ալ ըրած էր:

Այդ օրն այլ Մարտիկին կ'ուզէր հաւատացնել, որ այծը Նարեկ, Գործոց, Կիպրիանոս լմնցուցած է, նոյնիսկ տիրացու Սրապէն աւելի լաւ բան էր կարդացեր: Վկայ անոր մօրուսը:

Մարտիկ այս անգամ շատ մտիկ չէր ըներ, որովհետեւ միտքը դրած էր Զուլհակ Պետոյին քանի մը նախշուն կծիկներ գողնալ: Միայն կը սպասէր, որ Պետօն կունակը դարձնէր:

- Կ'երթա՞ս, Մարտիկ: Զմոռնաս ձեր տանը աւետարանը այծի քթին առջեւ բռնել: Որ ալնոց մ'ալ ունենայ, չիփ-չիտակ կ'ըլլայ բողոքական պատուելի:

Մարտիկ հեռացած էր՝ այծն իր ետեւէն:

Զուլհակ Պետօն, երբ առէջը լմնցաւ, տեսաւ՝ երեք կծիկ պակաս էր: Անտարակոյս Մարտիկի գործն է: Յիշեց, որ ուրիշ օր մը ուզած էր այդ կծիկներէն պարսատիկ մը շինելու համար:

Յաջորդ օրը Զուլհակ Պետօն, երբ տունէն դուրս կուգար թեւերը սոթտած, տեսաւ Մարտիկը քարի մը վրայ նստած, գլուխը կախ՝ ոտքին մխուած փուշ մը հանելով զբաղուած: Պետօն կամաց մը գնաց ու բռնեց ականջէն: Մարտիկ բռնուած էր: Ականջը Զուլհակի ձեռքին մէջ չէր կրնար ձգել ու փախիլ:

- Ըսէ՛ տեսնեմ, պարսատիկը շինեցի՞ր:
- Ձէ, չէ, ա՛լ չեմ ըներ. որ ուզես՝ պարսատիկը քեզի համար կը շինեմ,- ըսաւ Մարտիկ ականջի ցաւէն, փուշէն կտրացած ոտքի մատներուն վրայ քալելով:
- Էտ պառաւ հօրաքոյրդ՝ վհուկի հէքեաթներ պատմելով՝ գլուխդ *պայխուշ* է դարձուցեր: Վախնամ վերջ ի վերջոյ քեզ աւագակ շինէ,- ըսաւ Պետօն ու ականջը թոյլ չտուաւ, մինչեւ որ իր տան սեմէն ներս, *դեզկեհա* հին քով կեցուց:

Զուլհակ Պետօն Մարտիկի ոտքին փուշը հանեց, նստեցուց իր մօտ ու ինքն ալ *դեզկեհա* հին առջեւ նստած՝ գունատոր մագոգները շտկեց ու խօսեցաւ.

- Հիմա ինձ մտիկ ըլրէ, Մարտիկ: Էս մեկը քու հօրաքոյրիդ հէքեաթին չի նմանիր: Մեր պապերը պատմեր են, ես ալ քեզի պիտի պատմեմ, եթէ լաւ մը մաքրես քիթդ, այ, հտպէս: Մարտիկի կողքին տեղաւորուած էր նաեւ այծը: Մարտիկ ու այծ սկսան մտիկ ընել, երբ ջուլհակՊետոն երեք գունաւոր մագոգներով կտաւը կը գործէր ու կը պատմէր:

«Ատենօք մեր երկիրը հսպէս չէր, Մարտիկ: Մեր թագաւորի բազուկը երկար էր: Հիւսիսի թագաւորը կուգար, ուղտի կարաւաններով, բեռցուցած սատաֆ ու դումաշ, ճէննէթի հաւեր, զիմրիւտ ու հալուէ: Կուգային շարքով մեր թագաւորի հայր վախտը հարցնելու: Մեր թագաւորն ըլ ըսես, թագը *եանի* վրայ դրած կը հարցնէր.

«- Ըսէք նայիմ՝ ի՞նչ կայ չկայ:

«- Զեր ողջութիւնը, տէր թագաւոր,- կը պատասխանէին մէկ բերան.- քանի ձեր շուքը կայ՝ աշխարհի բաները կատարեալ են:

«Էտպէս էր մեր թագաւորը, Մարտիկ: Էն ժամանակ ժողովուրդը ձիերով կը պտտէր՝ գտակնին ծուռ դրած: Էն ժամանակ *պող պողչան*երուն մէջ հազարան պլպուլներ թարվառ կուգային, ծիրանն ու թուզը, նունն ու սալորը իրենց քաղցրութենէն կը ճեղքուէին:

«- Քիթդ, Մարտիկ, ա՛յ, հտպէս:

«Էն ժամանակ արար աշխարհ, արեւ ու լուսնկա մեր թագաւորի ոտքը կուգային, որովհետեւ էն օրերուն Հալունի թուրը մեր թագաւորին ձեռքն էր: Հեղ մը էտ թուրը պատեանէն որ դուրս գար, աշխարհի չորս կողմի, հիւսիսի, հարաւի, արեւմագի ու արեւմարի թագաւորները պաղը թօթուած կաղամբի պէս իրենց գահերուն վրայ կը դողային: *Տուշմանի* զօրքերը արեւը մնացած խլուրդներու պէս ծակէ ծակ կը փախփիւէին»...

Մարտիկ աչքերը բաց՝ այնքան տարուած էր ջուլհակի պատմութենէն, որ կը մոռնար յաճախ իր քիթը սրբել: Այդ օրն ալ *թէրսի* պէս Մարտիկի քիթը կը վազէր միշտ:

«Էն օրերուն մեր գահի վրայ քրիստոնեայ թագաւոր մը կ'ելլէ, էնպէս քրիստոնեայ, որ ամէն անգամ որ զաւակ ունենայ, մեր փրոտ Մուսեղին պէս Հին Կտակարանը կը շրջէ զաւակներուն անուններ գտնելու:

«Օր մը, էս թագաւորը վանքի եպիսկոպոսները իր քով կը կանչէ ու կ'ըսէ.

«- Տարէք, Հալունի թուրը ծովը ձգեցէք: Ի՞նչ պէտք կայ թուրին, թափուած արիւններու, քանի որ երկնքի թագաւորութիւնը կայ:

«Ո՛րքսի վարդապետներէն մէկը, որ Կիպրիանոս շատ էր կարդացեր, որ գիտէր աստղերը կորեկի պէս համբել, կ'ըսէ թագաւորին, որ եթէ թուրը ծով ձգուի, ծովը կը փրփրի, ալիքները կը շատնան ու արար աշխարհ ջրհեղեղ կ'ըլլայ:

«Ժողովուրդը էս բանը կը լսէ: Գիշերով պալատին բոլորը կը հաւաքուին կաշեգործներ, երկրագործներ, ջուլհակներ, ոսկերիչներ, հովիւներ, ձիաւորներ ու կը սպառնան թագաւորին.

«- Հալունի թուրը որ ծովը ձգէք, մեր թագը կ'երթայ, մեր գահը կ'երթայ: Հարաւի թագաւորը, հիւսիսի թագաւորը, Մսրայ մելիքը, թաթարը մեր երկիրը կ'արշաւեն:

«Աղջիկներ, կիներ ձեռքերնին իւղի լապտերներ բռնած, աղմուկ, ձէն կը ձգեն: Գուն մի ըսեր՝ վանքի եպիսկոպոսները գիշերով վանքէն դուրս փոս մը կը փորեն: Մէկը բահով, միւսը բրիչով, մօրուսով, ֆէրէչէով փոսը կը փորեն ու կը թաղեն թուրը Հալունի:

«Էտ հտտեղ ձգենք, Մարտիկ, հիմա գանք քիթդ, ա՛յ հտպէս:

«Էտ տարուան մէջ, Մարտիկ, մեր թագուհին պարտէզ իջած պահուն՝ կ'իյնայ յանկարծ ու ոտքը կը կոտրի: Կ'ունենանք *թոփալ* թագուհի: Էտ տարուան մէջ մեր թագաւորի աչքը եղնիկի կոտոշ կը մտնէ: Կ'ունենանք մէկ աչք թագաւոր: Տարին չանցած՝ կը սկսին թագուհին սրմա մագերը թափիլ: Կ'ունենանք *քէլ* թագուհի: Մսրայ մելիքը կը լսէ էս

բանը: Ինչ գիտեմ, Մարտիկ, մեղքը վզերնին, կ'ըսեն՝ որ հայ վաճառականի մը միջոցով կը հասնի էտ լուրը: Հայ վաճառականը տարին մէկ անգամ Մըսը կ'երթայ եղեր, բերելու սանտալներ, փղոսկրէ սանտրեր, կապիկ, արմաւ քաղաքի պազարին համար: Երբ Մսրայ մեկը կը լսէ, որ չկայ Հալունի թուրը, անթիւ գորքերով, ես ըսեմ երեսուն, դուն ըսէ քառասուն հազար, կը հասնի Հայաստան ու զուռնայով դհոլով վրան կը զարնէ սարի տակ: Էս որ կը լսէ մեր թագաւորը, լեզուն *կուլլի* պէս բէրնին մէջ կը ծանրանայ: Էս տաճիկները, Մարտիկ, էն օրերուն տեղ չունէին, անապատներուն մէջ մագէ վրաններու տակ կ'ապրէին: Մերկ ու տկոյր, ուղտի փոստերու վրայ, Ղուրանը կը սերտէին ու մողեսներով կը սնանէին: Էս որ լսեցին, *տէֆով տուտիկով* կանգնեցան հարաւի կողմը: Մեր թագաւորը հեռուէն նայեցաւ մէկ աչքով ու սիրտը փորին մէջ ինկաւ: Եկան հաւաքուան, թագաւորի թեւէն արին առին, որ խելքի գայ: Էն առաջ, Մսրայ մեկը խրխրջան ձիով մարդ ուղարկեց հայոց թագաւորի մօտ:

«- Մսրայ մեկը քսան հազար վրան ունի. որ քառասուն ուղտի բեռ ոսկի չտաք, Հայաստանի հողը մոխիր կը դարձնէ:

«Ներս մտան տաճիկին մարդերը երկար մօրուսով, մերկ ու տկոյր, ձեռքերնին *նաճախ* բռնած:

«- Քսան հազար կովեր կուտաք, քսան հազար ուղտի բեռ չորթան: Քսան հազար չինի խաւուրճա, քսան հազար ջվալ ցորեն, կլկ ու գարի: Քսան հազար տիկ նոայ ուուպ՝ չէրբէթի համար: Կուտաք նախիրներով էծեր ու աղջիկներ:

«Էս *սհադին* հայոց ժողովուրդը կաշեգործի մը գլխաւորութեամբ պալատը կը կոխեն Հալունի թուրը գտնելու համար:

«- Որ դրեր ես՝ գտիր:

«Հայոց թագաւորը իր *թոփայ* թագուհին հետ լենգլենգալէն, աղ ու հացով, խաչով խաչվառով Մսրայ մեկը դէմ գացին: Դուն մի ըսեր, տաճիկի *էսկեսարը* միւս կողմէն կը սկսի թալանի: Մէկ կողմէն Մսրայ մեկը մարդերը պալատան ոսկիները *չէրէկով* չափեցին, մարգարիտները *էպչէկով* ու աղամանդները՝ *քօտով*: Տաճիկները բռնեցին հաւերու պէս թարվառ եղող վանականները, վանքի տանիքներէն վար կախեցին: Գեղեցիկ աղջիկները մտրակներով վարեցին: Այրեցին, քանդեցին, մեր թագաւորն ու թագուհին էչի վրայ նստեցուցին, էչին պոչն ալ տուին թագաւորի ձեռքը»...

- Հիմա ո՞ւր է էտ թուրը,- հարցուց Մարտիկ անհամբեր:

«Էտ չեղաւ, տղաս, որ գիտնայի, առաջին անգամ ջուլհակ Պետօն կը վերցնէր ու հայերու դէմ, էնքան անիրաւ աշխարհը քարուքանդ կ'ըներ: Էն օրուանն մինչեւ հիմա, Մարտիկ, թուրին տեղը ոչ ոք գիտէ: Հայաստանի հողին մէջ է: Որ տէր ըլլանք մեր երկրին, որ վարենք ցանենք, տեսնես օր մը արօրի խոփին տակ կուգայ»...

Մարտիկի հետ այժն ալ խելօք մտիկ ըրաւ որոճալէն ու մօրուսը չարժեղէն: Կարծես գիտէր այդ բոլորը, կարծես այն օրերու վանականներու ոգին ըլլար: Ժամանակը ուչ էր, հիմա հօրաքոյրը Մարտիկի ճամբուն կը սպասէ: Այժը տակաւին չէր կ'թուեր:

Մարտիկ տուն չտկուեցաւ, երբ ջուլհակ Պետօն վրայէն գլխէն թելերը կը հաւաքէր, եկեղեցի երթալու համար: Այժերը ետեւ ձգած, փուշ մտած ոտքին վրայ կաղալէն, Մարտիկ կը մտածէր Հալունի թուրի մասին: Եթէ Հալունի թուրն ունենար...

Եկեղեցիէն յետոյ ջուլհակ Պետօն, երբ տան սեմին քով, աթոռակի մը վրայ նստած՝

ՍՊԻՏԱԿ ՁԻԱՒՈՐԸ

«Լոյս գուարթ»ը կը մըմռար, ու ջուրի գնացող գեղի հարսներն ու աղջիկները կը դիտէր, տեսաւ Մարտիկը, որ փէշին մէջ բան մը բռնած մօտեցաւ:

- Այդ ի՞նչ է, Մարտիկ:

- Կծիկներն են:

- Քեզի պահէ, Մարտիկ, պարսատիկ չինէ:

- Ա՛յ պարսատիկ չպիտի չինեմ, Հաւրունի թուրը պիտի գտնեմ:

- Ինչպէ՞ս, Մարտիկ,- հարցուց ջուհակ Պետօն ու խնդաց, որովհետեւ միշտ ալ յաջողած էր, երբ Մարտիկի բան մը խօսած էր:

- Հօրաքոյրիս հատիկ ձգել կուտամ, ան տեղը կը գիտնայ:

Ջուհակ Պետոյին այնքան հաճելի եկաւ Մարտիկի այդ մտածումը, որ խոստացաւ անոր նախշուն թելերով պարսատիկ մը չինել:

- Ան կրնայ ըսել,- աւելցուց Մարտիկ,- անցեալ օրը Օվականենց աքաղաղն էր կորսուեր, հօրաքոյրս հատիկ ձգեց ու ըսաւ.

Եփի եփի եփն ի վրան,

Պուտուկին մէջ խուփն ի վրան:

- Է՛հ, գտա՞ն,- հարցուց ջուհակ Պետօն՝ երկու ձեռքերը Մարտիկի ուսերուն վրայ դրած. այնքան սիրեց անոր միամիտ երեւակայութիւնը:

- Հէլպէթ գտան: Փրոտ Ակօն գողցեր պուտուկին մէջ էր ձգեր, որ մեծ պահէին միս ուտէ:

Յաջորդ օրը հօրաքոյրը հերսոտ՝ ջուհակ Պետոյի դռնէն ներս մտաւ:

- Պետօ, էս քու ըրածդ ի՞նչ պիտի ըլլայ:

- Նորէն ի՞նչ կայ, Մաքօ,- խօսեցաւ Պետօն՝ խնդուքը պիտի տակ պահելով:

- Մարտիկը տունը կրակն է զարկեր: «Չե՞ս ըսեր որ թագաւոր ունեցեր ենք, Հաւրունի թուրը հողին տակ թաղեր են, թուփալ թագուհին էջի վրայ նստեցուցեր են»: Տեսնես, էնպէս կը պոռայ, կ'ուզէ որ հատիկ ձգեմ, թուրին տեղն ըսեմ: Ա՛յ ճարս հատաւ, ըսի որ լեռներէն անդին է, արեւ ցաթած տեղը: Չհաւատաց, մինչեւ որ հատիկ ձգեցի:

- Մաքօ, Մարտիկը խելացի տղայ է,- ըսաւ ջուհակ Պետօն:- Դպրոց դիր որ գրել կարողալ սորվի:

- Պետոյի բանը. դպրոցն ի՞նչ ընէ: Մարդ ինչքան դպրոց երթայ, խաչը երեսին ծուռ կը հանէ: Հը, Մանասին տղան քաղաք դպրոց կ'երթայ, քիթը կ'ըսես տանիքներուն կը քսուի: Որ հարցնես՝ կտան ի՞նչ տեսակ կը բանին, չի գիտեր: Մարտիկը որ բախտ ունենար, մայրը ողջ կ'ըլլար, հայրն ալ գիւղ կը մնար: Երբ Մարտիկը մեծնայ, քովդ ճամբեմ որ ջուհակութիւն սորվի:

- Ջուհակ Պետօն ի՞նչ է ըրեր, որ Մարտիկն ի՞նչ պիտի ընէ:

- Հիչ բան չընէ, վաղը իր կնկան չապիկը իր ձեռքով կը գործէ:

- Դուն երբեմն Մարտիկը իմ քով դրկէ, Մաքօ: Ես էնոր գրել կարողալ կը սորվեցնեմ,- ըսաւ ջուհակ Պետօն:

Այդ օրը Մարտիկ բերդի ծիրանի ծառերուն տակէն ձայն ձգեց Մաթոյին: Մաթօն հեռուէն լսեց Մարտիկի ձայնը, սակայն ձայն չտուաւ: Չէր ուզեր փախցնել կատու մը, որ նեղը ձգած էր իր նետած քարերով: Ոոչոր քար մը դպած էր կատուի գլխին: Կատուն ուժեղ

մարդկային ձայնով, քարմանի նման արագ արագ ինքն իր վրայ դարձած ու ինկած էր: Մաթօն յաջողած էր: Երբ մօտեցաւ, կատուի բերնէն արիւն կուզար:

Մաթօն գիւղի ստահակ տղան էր, Մարտիկէն քանի մը տարի մեծ, մօտ 12 տարեկան: Մազերը գրեթէ մինչեւ ուսերուն թափած էին: Ինկած էր խորթ մօր մը ձեռքին տակ: Գիշերները դուրսը կը լուսցնէր, չորցած խոտերուն վրայ, մանաւանդ ամառները այգիներուն ու բերդին մէջ:

Ամառ օր մըն էր, երբ պառու քիւրտ մուրացիկ կնոջ մը քնանալը տեսաւ բերդի քարերուն մէջ: Կնոջ պատուտած լաթերուն մէջէն գաղտուկ դիտեց, դիտեց անոր մարմնի մերկ մասերը ու առաջին անգամ ըլլալով՝ զգաց իր մէջ անծանօթ հետաքրքրութիւն մը: Անկից յետոյ առանձին, կենդանական բնագրով կը դիտէր իր խորթ մօր անփութօրէն դուրս մնացած կուրծքը ու սրունքները:

Մաթօ առանձնապէս տաք հետաքրքրութիւն ունէր Սուլթան Սաթունին հանդէպ, որ տարեց կին էր. ունէր երկար վարսեր ու լայն կոնակ: Թերեւս այդ էր պատճառը որ յաճախ Մաթօ անոնց այգիի պատերուն ցուիքները կը քակէր: Հակառակ կեանքի բոլոր գրկանքներուն, Մաթօն առողջ էր: Ունէր լայն բերան, աչքերը այծի աչքերու կը նմանէին ու ուրախ էր: Միակ վիշտը տակաւին ուղտի մը վրայ չհեծնելն էր:

Մաթօն դաշտի իշխանն էր: Ան շատ լաւ գիտէր, թէ իր գլխուն վրայէն անցնող թռչունին բոյնը ո՛ր այգիին մէջ եւ որ ծառին վրայ է: Գիտէր նապաստակ եւ կամ կատու քերթել: Իմացեր էր, որ անոնց փոստերը Աճեմիստանի մէջ փափախ կամ ոսկիի պարկ կը շինէին:

Մաթօն, կատուն ուսին նետած, ծառերուն մէջէն Մարտիկի քով բարձրացաւ, ու ցոյց տուաւ իր նոր որսը՝ դեղին ու ճերմակ:

Մաթօն ըսաւ Մարտիկին, թէ մորթը կրնար *դիւքէնճի* Մարսուպին ծախել, մէկ *դրուշի*: Այդ դրամով կրնար *կարւանին* ճամբան բռնել ու միանալ Հաճի Մուսայի խումբին: Մաթօն գիտէր թէ լեռներէն անդին ուրիշ աշխարհ մը կար ու այդ աշխարհի հերոսը աւագակապետ Հաճի Մուսան էր: Գիտէր, թէ կարւանները Աճեմիստան կը տանէին նապաստակի ու կատուի փոսթ, թէ կարւանին ճամբուն վրայ հոր մը կայ, հորին մէջ խափշիկ մը պահակ կեցած: Եթէ մէկը կռուելով այդ խափշիկին յաղթէ, հորին մէջէն կը բացուի ծանր պղինձէ դուռ մը Պղինձէ քաղաքին, որուն սիւները ոսկի են եւ ուր կան աղամանդներ կատուի գլխի մեծութեամբ, նաեւ աննման աղջիկներ հրեղէն մագերով:

Մաթօ՝ կատուն բերդի պատէն ցցով մը կախած՝ սկսաւ քերթել: Արեւը եկեղեցիի խաչին վրայ կ'ըսես հրդեհ ձգած էր: Կը լսուէր երկաթագործ Սաչերի մուրճի ձայնը շէկ երկաթի վրայ:

- Մաթօ,- հարցուց Մարտիկ,- էդ կարւանին ճամբան արեւին կողմը կը տանի՞:

- Հէլպէթ կը տանի: Էս դէմի լեռը որ անցնիս, արեւին տեղը հոն է,- ըսաւ Մաթօ՝ այնքա՛ն վստահ:

- Գիտե՞ս, Մաթօ, որ արեւի ցաթած տեղը երթանք, հոն՝ հողին տակ խոշոր թուր մը կայ: Զուլհակ Պետօն ըսաւ, հօրքոյրս ալ հատիկ ձգեց:

- Ինչ սուր, Մարտիկ,- հարցուց Մաթօ՝ աչքերը խոշոր բացած կատուին քերթելը դադրեցնելով:

- Էն սուրը, որ մեր թէք աչք թագաւորի օրով հողին տակ թաղած են: Էն սուրը, որ գտնելու ըլլանք, թուրքի *էսկեսար*ները մկերու պէս ծակերը կը մտնեն:

- Մարտիկ, դուն գիտե՞ս ուր է:

- Հա, կ'ըսեմ, հօրաքոյրս հատիկ ձգեց՝ արեւին ելած տեղը:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արքայինիկ նիկողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ 3

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄՔ 5

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐՏԻԿՆ ՈՒ ՋԷՑՆԱՊԸ 7

ՀԱՃԻ ՄՈՒՍԱՅԻ ԳԻԻՂԸ 49

ԿԱՐԱԻԱՆԸ 78

ՎԱՐՊԵՏ ՈՒ ԱՇԿԵՐՏ ԿԱԼԱՆԱԻՈՐ 102

ՄԱՐՏԻԿ ՍՊԻՏԱԿ ՁԻՈՒ ՎՐԱՅ 126

ՄԱՐՏԻԿ ՓԱՆՍՏԱԿԱՆ 154

ՄԱՐՏԻԿ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋ 173

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐԴԱՋՈՐԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ 194

ՖԷՏԱՅԻՆԵՐԸ 213

ՋԱՐԷ ԿՈՒՈՒԻ ԴԱՇՏ ԿԻՋՆԷ 233

ՄԱՐՏԻԿԷՆ ԼՈՒՐ ԿԱՅ 257

ՄԱՐՏԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ 282

ԿԻՆԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ 309

ՄԱՐԳԱՐԻ ՄԱՀԸ 325

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ 343

ՇԷՑԻՆ ՃԷԼԱԼԻ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ 359

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆԱԿԸ ԿՈՒՇԱՆԱՅ 378

ՋԷՑՆԱՊԻ ՓԱՆՈՒՍԸ 399

ԿԱՐՕՆ ԵՒ ԶԱՐԷՆ	411
ՍԱՔՈՑԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ	425
ԶԷՑՆԱՊ ԶՐԱԻԱՆԻ ՄԷՋ	442
ՀԱՃԻ ՄՈՒՍԱՅԻ ՊԱՐՏՈՒԹԻԻՆԸ ԵՒ ՔԻԻՐՏԵՐԸ	461
ՔԻԻՐՏԵՐՈՒ ԴԱՍԱԼՔՈՒՄԸ	479
ԶԷՑՆԱՊ ԹԱԹՈՍԻ ՀԵՏ	792
ԿԱՊՈՑՏ ՑՈՒԼՈՒՆՔՈՎ ԳԼՈՒԽԸ	506
ՀԱՃԻ ՄՈՒՍԱՆ	526
ԶԷՑՆԱՊ ԼԵՐԱՆ ՎՐԱՑ	544
ԶԷՐԶԻ ԿԻՐՈՍԸ ՃԱՄԲԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ	554

ՄԱՍ ԶՈՐՐՈՐԴ

ԴԷՊԻ ԳԱՐԱՏԱՂԻ ԼԵՌՆԵՐԸ	570
ՀԱՃԻ ՄՈՒՍԱՆ ԶԻՈՒ ՎՐԱՑ	608
ՏՕՔԹ. ՆԱՑԻՐԵԱՆ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ	642
ԼԵՌՆԷՆ ՎԱՐ	657
ԳԱՐՈՒՆ Է	677

Կարո Վարդանյան

«ՍՊԻՏԱԿ ԶԻԱՎՈՐԻ» ՎԵՐԾԱՆՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ	781
--	-----

ՀԱՄԱՍՏԵՂ
ՍՊԻՏԱԿ ՁԻԱԻՈՐԸ

АМАСТЕГ
САДНИК НА БЕЛОМ КОНЕ

Հրատարակչության տնօրեն Արմինե Քոչարյան
Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Հրատարակչության պատրաստեց՝ Արքմենիկ Նիկողոսյանը
Ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի

Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ², 1.3 ծ.կ
Ծավալը՝ 49.25 տպ. մամուլ
Տառատեսակը՝ Barz
Տպաքանակը՝ 400
Գինը պայմանագրային
Տպագրվել է «ԵԳԵԱ» ՍՊԸ տպարանում
Հասցե՝ ք. Երևան, Հ. Հակոբյան 3



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 քմ.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru